Հաշվետվություն

2025 թվականի մայիսի 19-ից 21-ը Լատվիայի Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Սուրեն Թովմասյան, Կադաստրի կոմիտեի ղեկավար:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ռիգա, մայիսի 19-ից 21-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   Եվրոգեոգրաֆիքս ասոցիացիա:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Եվրոգեոգրաֆիքս ասոցիացիայի գլխավոր ասամբլեային:

5. **Քննարկված թեմաները.**

Գլխավոր ասամբլեայի հիմնական թեմաներն էին.

- ✓ Ընդհանուր պատկերը՝ թվային փոխակերպում,
- ✓ Ապագայի տեսլականը. Եվրոգեոգրաֆիքսի հաջորդ 25 տարիները՝ ինտերակտիվ պանելային նիստ,
- ✓ Գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգ,
- ✓ Կարողությունների զարգացման և հավասարության ու բազմազանության ապահովման մարտահրավեր,
- ✓ Մրցակցող քաղաքականության շարժիչ ուժեր,
- ✓ Տեխնոլոգիաները, որոնք գործում են ի օգուտ կամ ի վնաս ասոցիացիայի - արհեստական բանականություն և ապագայի միտումներ,
- ✓ Ազգային քարտեզագրության և կադաստրային գործակալությունների արձագանքը համաշխարհային մարտահրավերներին,
- ✓ Ասոցիացիայի տարեկան հաշվետվություն,
- ✓ 2025 թվականի գործառնական պլան,
- ✓ Կառավարման խորհրդի նոր անդամների ընտրություն,
- ✓ Անդամակցության ռազմավարություն, ինչպես նաև բյուջե և բաժանորդագրություններին առնչվող հարցեր:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Գլխավոր ասամբլեայի ընթացքում քննարկվել են օրակարգով նախատեսված մասնագիտական ոլորտին առնչվող հարցեր, ասոցիացիայի հետագա անելիքները, ներկայացվել է ասոցիացիայի տարեկան հաշվետվությունը, բաժանորդագրությունները, 2025 թվականի գործառնական պլանը և անդամակցության ռազմավարությունը: Ներկայացվել են շնորհանդեսներ, որին հետևել են կլոր սեղանի ձևաչափով ինտերակտիվ քննարկումներ: Կադաստրի կոմիտեի պատվիրակությունը մասնակցել է վերոնշյալ քննարկումներին:

Անդրադարձ է կատարվել թվային փոխակերպման հարցերին, ասոցիացիայի ապագայի տեսլականին, գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգին, կարողությունների զարգացման և հավասարության ու բազմազանության ապահովման մարտահրավերին, մրցակցող քաղաքականության շարժիչ ուժերին, արհեստական բանականությանը և ապագայի միտումներին, համաշխարհային մարտահրավերներին ազգային քարտեզագրության և կադաստրային գործակալությունների արձագանքին:

Օրակարգով նախատեսված նոր անդամների ընտրության ժամանակ երկրորդ անգամ վերընտրվել եմ կառավարման խորհրդի անդամ: Կառավարման խորհուրդը պատասխանատու է ասոցիացիայի ընդհանուր կառավարման համար, այն կազմված է նախագահից, ով նախագահում է ասոցիացիան և առնվազն վեց անդամից, ովքեր լիիրավ անդամների ներկայացուցիչներ են:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Միջոցառման շրջանակներում երկկողմ աշխատանքային հանդիպումներ եմ ունեցել ասոցիացիայի անդամ երկրների՝ ոլորտը ներկայացնող պատվիրակությունների ներկայացուցիչների հետ, քննարկել եմ մասնագիտական բնագավառում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր և համագործակցության հնարավոր ուղղությունները:

Գլխավոր ասամբլեայի շրջանակներում կարևորվել են անդամ պետությունների ներգրավվածությունը գեոդեզիայի կառավարման մեջ, գեոդեզիական արտադրանքի արդիական ճշգրտության և հավաստիության պահպանումը, մասնագիտական ոլորտներում պրոֆեսիոնալ աշխատուժի պահպանումն ու զարգացումը, գիտական կազմակերպությունների, արդյունաբերական ոլորտների և հասարակության կողմից գեոդեզիայի արժեքի ճիշտ ընկալումը: Առանձնակի կարևորվել է գեոդեզիայի, կրթության և գեոբրոքերի գաղափարը, որը զարգացման հեռանկարներ ունի:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Գլխավոր ասամբլեայի եզրափակիչ փուլում մասնակից երկրների պատվիրակները հայտնել են իրենց պատրաստակամությունը զարգացնելու երկկողմ և եռակողմ համագործակցությունը՝ գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտներում

փորձի փոխանակման ուղղությամբ: Համաժողովի ընթացքում առանձնահատուկ կարևորվել են որոշ կետային հարցեր, որոնց շրջանակներում մասնակից պետական կառույցներին առաջարկվել է կենտրոնացնել ռեսուրսներ և ապահովել դրանց շարունակական զարգացումը, մասնավորապես՝

- Մասնագետների շարունակական վերապատրաստում. ապահովել այնպիսի միջավայր, որտեղ մասնագետները հնարավորություն կունենան կազմակերպելու իրենց շարունակական կրթությունը:
- Գեոդեզիայի ուղղության վրա ռեսուրսների կենտրոնացում. ապահովել գեոդեզիական մշտական գործող և կայուն տեղադրված տարբեր դասերի ցանցերի թարմացում, պահպանում՝ հաշվի առնելով ռեֆերենց կայանների ցանցերի խոցելիությունը:
- Դպրոցական կրթական համակարգում տարածական ԱՏՀ (GIS) տեխնոլոգիաների ներդրում և զարգացում, որը կնպաստի դպրոցական տարիքից աշակերտների՝ տարածական վերլուծությունների իրականացման մտահորիզոնի զարգացմանը:
- Իրականացնել տարածական և վիճակագրական տվյալների ինտեգրացիա, ինչը կխթանի ավելի արդյունավետ և թվային կառավարման իրականացմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Սուրեն Թովմասյան 29.05.2025 թ.

Հավելված N 2 ՀՀ վարչապետի N 326-Ն որոշման
Հավելված N 3 ՀՀ վարչապետի N 1230-Ն որոշման

Հաշվետվություն
Գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին

1 Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե

2 Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ Վարչապետի Որոշում N294-Ա 10.04.2025թ.

3 Անուն, Ազգանուն, զբաղեցրած պաշտոն ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյան
4 Գործուղման վայրը Լատվիայի Հանրապետություն քաղաք Ռիգա
5 Գործուղման ժամկետները 19.05.2025-21.05.2025թթ.
6 Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը(Կադաստրի կոմիտեի 2025 թվականի ծախսերի նախահաշիվ)
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
1. ճանապարհածախս, 2. գիշերավարձ, 3. օրապահիկ
ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)
		Սուրեն Թովմասյան	
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը էկոնոմ դաս		
	Ավիաճառայության արժեք (դրամ)	219,000	219.0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) Եվրո	100	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	43,096.00	
	Օրերի քանակ	2	
	Ընդամենը (դրամ)	86,192.00	86.19
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) Եվրո	81	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	34,907.76	
	Օրերի քանակ	3	
	Ընդամենը (դրամ)	104,723.28	104.7
Ընդամենը ծախսեր (դրամ)			409.9

Գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյան

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ/
գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյան
29.05.2025թ.